



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿԵԲԵՐ ՔՎԱՐՑԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՏԻԳՐԱՆԵՍ», «ԱՐՏԱՎԱԶԴԵՍ» ԵՎ «ԷՐԱՏՈ» ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, շահագործման թույլտվություն ունեցող Ընկերության և ազդակիր բնակավայրերի մասին

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը և նրա շահագործման համալիրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագծում, զբաղեցնում է Արփա, Դարբ և Որոտան գետերի միջև ընկած տարածքը և այդ գետերի ջրհավաք ավազանների ջրբաժանն է:



Նկար 1. Ամուլսար

Ամուլսարի հանքային գոտում իրականացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում առանձնացվել են Տիգրանես-Արտավազդես միացյալ, Էրատո, Արշակ և Օրոնտես տեղամասերը՝ իրենց ներքին կառուցվածքներով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվել են Տիգրանես-Արտավազդես, Էրատո տեղամասերի պաշարները, որոնց շահագործման իրավունքը 2014թ. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրվել է «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին («Գեոթիմ» ՓԲԸ):

Հանքաքարից մետաղների կորզումը նախատեսված է իրականացնել կույտային տարրավազման եղանակով, ինչն առաջին անգամ է կիրառվելու Հայաստանում:

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին հատկացված հանքավայրի տարածքը 113,0 հա է: ՀՀ ՏԿԵՆ-ի՝ ի դեմս նախարար Սուրեն Պապիկյանի և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջև 2020թ-ի դեկտեմբերի 30-ին կնքված «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ ՊՎ-245 պայմանագրի փոփոխություն» համաձայնագրի¹ համաձայն՝ շինարարական շրջանը պետք է տևի մինչև մինչև 2021թ-ի հունիսի 1-ը, օգտակար հանածոյի արդյունահանում՝ 9 տարի, 5,5 տարի՝ հանքի փակում:

15.03.2021թ. դրությամբ արդյունահանվելիք պաշարները կազմում են՝ հանքաքար՝ 89,376,3 հազ. տ, որից ոսկի՝ 73,733 տ, արծաթ՝ 294,367 տ, տարեկան արդյունահանվող թույլատրելի հանքաքարի ծավալը՝ 10,0 մլն. տ, լեռնահատկացման ակտը՝ ՊՎ-245, շահագործման թույլտվությունը՝ ՇԱԹՎ-29/245:

Ընդերքօգտագործման թույլտվությունը տրված է մինչև 2036թ-ի հունվարի 1-ը:

Ազդակիր համայնքներն են Ջերմուկ համայնքը (Ջերմուկ քաղաք, Գնդեվազ բնակավայր), Զառիթափ համայնքի Սարավան, Սարալանջ, Ուղեձոր բնակավայրերը և Գորայք համայնքը:

¹ http://www.mtad.am/u_files/file/1/NOR%20Lydian_Paymanagir%20245.PDF

Կառուցվելու են ճանապարհներ, վերգետնյա փակ փոխակրիչներ, տեղադրվելու են ջարդիչներ, կառուցվելու են մշակման ջրերի ավազաններ: Կույտային տարրավացումն իրականացվելու է ցիանական նատրիումի լուծույթով, ցինկի փոշով նստեցման եղանակով ոսկու կորզման ֆաբրիկայում ստացվելու է ոսկու Դորեի համաձուլվածք:



Նկար 2. Ամուլսարի ծրագրի ենթակառուցվածք

Կույտային տարրավացման հարթակի ընդհանուր տարածքը կազմելու է 1153,900 հա, որը գտնվում է Ամուլսար լեռան արևմտյան կողմում, տեղադրվելու է հովտային նստվածքների տարածքում, իսկ ակնկալվող հզորությունը կազմելու է մոտ 106 մլն. տ: Գնդեվազ բնակավայրը կույտային տարրավացման հարթակի ամենամոտ կետից գտնվում է 1,2 կմ հեռավորության վրա և բացահանքերից ուղիղ գծով՝ մոտ 6կմ հեռավորության վրա: Կույտային տարրավացման հրապարակի ջրահեռացման ավազանը գտնվում է Արփա գետի ջրհավաք ավազանում՝ Կեչուտի ջրամբարից ներքև: Այն ներառում է հարթակի հարևանությամբ գտնվող կուտակման ավազաններն ու ոսկու կորզման ֆաբրիկան:

Մանրացված հանքաքարը փակ վերգետնյա փոխակրիչներով տեղափոխվելու է մոտավորապես 7,5 կմ: Տարրավացման հարթակի կենտրոնական մասից հանքաքարի տեղաբաշխումն իրականացվելու է բեռնատարներով: Հանքաքարը կուտակվելու է 8 մետր բարձրությամբ դարավանդներով՝ միջադիր պաշտպանիչ համակարգից ամենաշատը 100մ բարձրության վրա:

Ազդակիր համայնքների մասին

Ջերմուկ համայնքի ընդհանուր բնակչության թիվը համայնքի անձնագրի² 2018 թվականի տվյալներով կազմում է 9276 մարդ, ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը՝ 247, կենսաթոշակառուների թիվը՝ 1358: Համայնքում գործում է 4 գրադարան, 2 արվեստի դպրոց, 2 նախադպրոցական հաստատություն, 6 հանրակրթական դպրոց: Համայնքի բնակչության թիվն, ըստ համայնքի զարգացման ծրագրի, կազմում է 9372 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 4603 և կանայք՝ 4769, կենսաթոշակառուների թիվը՝ 1731, գործազուրկների թիվը՝ 368 մարդ: Ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը՝ 255 ընտանիք: Համայնքում կա 5992 աշխատունակ մարդ, որոնցից մշտական աշխատանքով, այդ թվում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված են 3675-ը: Համայնքում ստեղծված է աղետների դեպքում բնակչության տարհանման հանձնաժողով:

² http://vdzor.mtad.am/u_files/file/vdzor/Hamaynqner/jermuk_andznagir.pdf

Ջերմուկ համայնքի վարչական տարածքը 40399,61 հա է, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4586,3 հա, բնակելի ֆոնդի հողեր՝ 110,99 հա, բնապահպանական նշանակության հողեր՝ 4502,72 հա, անտառային և ջրային հողեր՝ 4145,32 հա, արդյունաբերական նշանակության հողեր՝ 48,96 հա, էներգետիկ ենթակառուցվածքների հողեր՝ 66,63 հա: Համայնքի սեփականությունը համարվող հողերը կազմում են 46504,5 հա, որոնցից 2479,9 հա վարելահողերը և մոտ 24476,79 հա արոտավայրերը վարձակալությամբ տրամադրվում է համայնքի բնակիչներին:

Ջերմուկ համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 27-ի N 8-Ա որոշմամբ հաստատվել է «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագիրը»: Այն նպատակ ունի նպաստել համայնքի շրջակա միջավայրի իրավիճակի բարելավմանը, բարձրացնել այդ ոլորտում համայնքի անդամների իրազեկվածության աստիճանը, հզորացնել ՏԻՄ մարմինների և ՀԿ-ների կառավարման և բնապահպանական ծրագրերի իրականացման խնդիրների լուծման կարողությունները: Ծրագրի շրջանակներում ակնկալվում է համայնքի գյուղական բնակավայրերի աղբավայրերի ստեղծման, համայնքի բնակավայրերի կանաչապատման և տարածքների ընդլայնման աշխատանքներ, բարելավվելու է քաղաքային այգին, բնակավայրերում տեղադրվելու են աղբամաններ, կատարվելու է ծառատունկ՝ համայնքի բնակչությանը ներգրավելով այդ խնդիրների լուծման գործընթացին:

Համայնքի տարածքը հարուստ է հնեաբանական և ճարտարապետական հուշարձաններով:

Համայնքի խնդիրները: Համայնքի գյուղական բնակիչներն ունեն արտադրած գյուղմթերքի իրացման խնդիր, մեծ է արտագաղթողների թիվը, աշխատունակ բնակչության մոտ 25 %-ը չունի մշտական աշխատանք:

Ջերմուկ քաղաքը

Ջերմուկ քաղաքը գտնվում է Ամուլսարի ծրագրի ենթակառուցվածքի դատարկ ապարների լցակույտի ամենամոտ հատվածից մոտ 7կմ, իսկ ամենամոտ բացահանքից՝ մոտավորապես 10կմ հեռավորության վրա: Մինչև 2016 թվականին համայնքների խոշորացումը քաղաքն ընդգրկված չի եղել Ամուլսարի ծրագրի ազդակիր համայնքների ցանկում, այնտեղ չեն կազմակերպվել Ծրագրի հասարակական և հանրային լուսմներ, որոշումների կայացման գործընթացում հաշվի չի առնվել քաղաքի բնակչության կարծիքը:



Նկար 3. Ջերմուկ առողջարանային քաղաք

ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N064-Ն որոշմամբ քաղաքը հայտարարվել է գրոսաշրջության կենտրոն:

Ջերմուկ քաղաքի բնակչության թիվը կազմում է 6696, որից՝ 3207-ը տղամարդիկ են, 3489-ը՝ կանայք: Քաղաքը գազաֆիկացված է, ունի աղբավայր, կեղտաջրերի մաքրման կայան: Ունի երկու հիմնական և մեկ ավագ դպրոց, երկու արվեստի մանկական դպրոց, սպորտդպրոց, շախմատի դպրոց, մանկապարտեզ և կենտրոնական գրադարան: Ջերմուկում գործում է Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղը: Վարչական տարածքը 5,5 հազար հա է: Քաղաքում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից հայտնին «Ջերմուկի հանքային ջրերի» գործարանն է: Գործում են մի քանի փոքր հիդրոէլեկտրակայաններ, պանրի գործարան: Ջերմուկ քաղաքի բուժական հիմնական գործոններն են՝ կլիման և հանքային ջրերը: Չմեռային հանգստի, բուժման, մարզաձևերի համար առողջարանային քաղաքն ունի բարենպաստ կլիմայական ու բնական պայմաններ: Ներկայումս գործում են 14 առողջարաններ 2000 մահճակալով և հյուրանոցներ ակտիվ հանգստի և բուժման համար նախատեսված բոլոր ենթակառուցվածքներով ու ծառայություններով (հյուրանոցներ, պանսիոնատներ, համաբուժարաններ, ըմպելաարահ, լողավազաններ, մարզահրապարակներ, կինոթատրոն, հասարակական սննդի օբյեկտներ, բարեր ու սրճարաններ): Գործում է 200 տեղանոց բազկաթոռային ճոպանուղին՝ իր սպասարկման ենթակառուցվածքներով: Գործում է «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն, որն ունի ջեռուցման, բժշկական անձնակազմի, բժշկական և տեխնիկական գույքի կարիք: Տեղի բնակչությանը բժշկական ծառայություններ են մատուցում նաև քաղաքում գործող առողջարանները, ավելի լուրջ առողջապահական խնդիրների դեպքում բնակչությունն օգտվում է համայնքից դուրս գտնվող բուժհաստատություններից:

Բնակչության հիմնական զբաղմունքն առողջարանային սպասարկման ծառայությունների մատուցումն է, ՏԻՄ-ում համայնքային ծառայությունը, վարձու աշխատանքը մասնավոր ձեռնարկություններում, գյուղատնտեսության ոլորտում մասնավոր գործունեությունը: 2018 թվականին «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում աշխատող 237 մարդուց 29-ն են եղել Ջերմուկ քաղաքի բնակիչ:

Գնդեվազ բնակավայր

Գնդեվազ բնակավայրը գտնվում է հանքից 7 կմ հեռավորության վրա, ամենամոտն է Ծրագրի ենթակառուցվածքին: Բնակչության թիվը կազմում է 864 մարդ (մշտական՝ 774) որից 427-ը՝ տղամարդ, 347-ը՝ կին, նպաստառու ընտանիքների թիվը՝ 12, կենսաթոշակառուների թիվը՝ 130 հոգի: Գյուղն ունի 82 աշակերտով միջնակարգ դպրոց, բուժկետ, մշակույթի տուն, մանկապարտեզ, մշակույթի կենտրոն: Գյուղում գործում է կենցաղային ծառայության 1 և առևտրի 5 կետ:



Նկար 4. Գնդեվազ բնակավայր

Գնդեվազ գյուղում վթարային է կոյուղու համակարգը, այն ունի վերանորոգման կարիք: Խմելու ջրով ապահովված է: Բնակավայրն ամբողջովին զագաֆիկացված է: Աղբավայր չունի: Գնդեվազն ունի 120 հա խոտհարք և 6000 հա արոտավայր, 500 հա վարելահող և 280 հա այլ հողատեսքեր: Պտղատու այգիների մակերեսը կազմում է 82 հա: Գյուղում 2015 թվականից գործել է «Էկո Ֆարմ» ՍՊԸ-ի կաթ արտադրող անասնապահական համալիրը: 300 կթու կովերի համար նախատեսված համալիրի տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում է ժամանակակից տեխնիկական պահանջներին: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Գնդեվազն առավել մասնագիտացված է այգեգործության մեջ, մշակում են բարձրակարգ ծիրան, սալոր, դեղձ, խնձոր, տանձ: Կա չրանոց, կաթի գործարան, կարի արտադրամաս, որոնք կյանքի են կոչվել «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի սոցիալական ծրագրերի շրջանակներում: 2018 թվականին «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում աշխատող 237 մարդուց 32-ն են եղել Գնդեվազի բնակիչ: /Համայնքի, քաղաքի և Գնդեվազի վերաբերյալ տվյալները վերցված են ՀՀ Վայոց ձորի մարզի պաշտոնական կայքում տեղադրված «Ջերմուկ համայնքի 2017-2020 թթ. զարգացման ծրագրից»³:/

Սարավան բնակավայր

Սարավան բնակավայրը (ներառյալ Սարալանջ և Ուղեձոր գյուղերը) գտնվում է բացահանքերից մոտավորապես 4 կմ և Ծրագրի ամենամոտ ենթակառուցվածքից՝ 2 կմ հեռավորության վրա: Սարավան բնակավայրը մտնում է ՀՀ Վայոց ձորի մարզի Զատիթափ համայնքի կազմում: Բնակչության թիվը կազմում է 297 մարդ, որից կանայք՝ 145, տղամարդիկ՝ 152, թոշակառուների թիվը՝ 26, նպաստառու ընտանիքների թիվը՝ 6, աշխատունակ բնակիչների թիվը՝ 195, աշխատանք ունեցողների թիվը՝ 24: Բնակավայրն ունի 22 աշակերտով հիմնական դպրոց, մանկապարտեզ չունի, ունի մշակույթի տուն, առողջության առաջնային պահպանման կենտրոն:

Սարավանի խնդիրներն են՝ սոցիալ-տնտեսական ընդհանուր վատ իրավիճակը, աշխատատեղերի բացակայությունը, բնակչության միգրացիայի աճը, աղբավայրի և բնակավայրում աղբամանների բացակայությունը, ոռոգման և խմելու ջրի ցանցի վատ վիճակը:

2018 թվականին «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում աշխատող 237 մարդուց 5-ն է եղել Սարավանի բնակիչ:

³ <http://vdzor.mtad.am/files/docs/24443.pdf>

Գորայք համայնք

Գորայքը գտնվում է Սյունիքի մարզում, ամենամոտ բացահանքից հեռավորությունը մոտ 5կմ է:

Վարչական տարածքը կազմում է 21684,46 հա: Բնակչության թիվը՝ 528 մարդ, որից կանայք՝ 214: Ունի 300 աշակերտի համար նախատեսված դպրոց, նախակրթարան, մշակույթի տուն, առողջության առաջնային պահպանության կենտրոն, նոր կառուցված կոյուղագիծ, խմելու ջրագծի վերանորոգված ցանց, փողոցային լուսավորություն, այնտեղ գործում են մի քանի ենթակառուցվածքներ, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի լաբորատորիան, «Ամուլսար» ոսկու հանքավայր կազմակերպությունը, «ՄԿ.ԿԱԶ» ՄՊԸ-ի գազալցակայանը, «Աշտարակ կաթ»-ի մթերման կետը:



Նկար 5. Գորայք համայնք

Հողեր (ընդամենը)՝ 21685 հա, այդ թվում՝ գուղատնտեսական նշանակության հողեր՝ 20715 հա, որից՝ վարելահող՝ 1815 հա, խոտհարք՝ 848 հա, արոտ՝ 14851 հա, այլ հողատեսք՝ 3202 հա, բնակավայրերի հողեր՝ 68 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 97 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 34 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 8 հա:

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են անասնապահությունը, դաշտավարությունը (ցորեն, հաճար, գարի, լոբի, կարտոֆիլ, սխտոր և այլ բանջարաբոստանային կուլտուրաներ):

Գորայք համայնքի գերակա խնդիրներն են՝ կոյուղագծերի կառուցումն ու վերանորոգումը, ոռոգման ցանցի կառուցումը (4886 հա), խմելու ջրագծերի վերակառուցումը և վերանորոգումը (2000մ), անասնապահության ոլորտի զարգացումը՝ նոր տոհմային ցեղատեսակների ձեռքբերումը, ժամանակակից անասնագոմերի կառուցումը, խոշոր անասնապահական ֆերմաների ստեղծումը, դաշտավարության զարգացումը՝ նոր բերքատու սերմերի ներմուծումը և ցանքսատարածքների ընդլայնումը, նոր կուլտուրաների մշակման ներդնումը, չմշակվող վարելահողերի մշակումը: Համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը խոչընդոտում են գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունը, համայնքային ֆինանսական միջոցների սղությունը, համայնքի բնակչության սոցիալական վիճակը, աշխատատեղերի բացակայությունը, բնակչության արտագաղթը, վարելահողերի ոռոգման

ցանցի ծանր վիճակը, գյուղատնտեսական շուկայի և առևտրաարդյունաբերական ապրանքների տոնավաճառի բացակայությունը, գործազրկության բարձր ցուցանիշները: 2018 թվականին «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում աշխատող 237 մարդուց 24-ն է եղել Գորայքի բնակիչ:

/Գորայք համայնքի և բնակավայրի վերաբերյալ տվյալների աղբյուր են հանդիսացել ՀՀ Սյունիքի մարզի պաշտոնական կայքում տեղադրված «Գորայք համայնքի 2016-2021թթ. զարգացման ծրագիրը»⁴, ինչպես նաև 2021 թվականի ապրիլի 8-ին ԷկոԼուրի՝ Գորայքի համայնքապետ Ա. Աղաջանյանի հետ հանդիպման ընթացքում ստացված տեղեկատվությունը/:

«Գեոթիմ» ՓԲԸ-ի (ներկայումս «Լիդիան Արմենիա» ՓԲԸ) կողմից ներկայացված Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» ՇՄԱԳ ԲՓ 35 28.04.2016թ. եզրակացության փորձաքննական պահանջներ

Փորձաքննական պահանջներն են.

1. Հանքավայրի և տարրավազման հարթակի կույտի շինարարության, շահագործման և փակման ընթացքում հետևողականորեն ղեկավարվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի 24.02.2014թ. N7/14 արձանագրությունում թվարկված օրենսդրական նորմատիվների պահանջներով:

2. ՀՀ Կարմիր գրքում գրանցված ծիրանավոր մատնունի բուսատեսակի պահպանումն ու վերարտադրությունն իրականացնել՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության և «Գեոթիմ» ՓԲԸ-ի միջև 2015 թվականի օգոստոսի 7-ին կնքված «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների առանձնյակների տեղափոխման մասին» պայմանագրի:

3. Հանքի փակումից երկու տարի առաջ սահմանված կարգով ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել հանքի փակման վերջնական ծրագիրը:

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի իրական սեփականատերերի մասին

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայքում⁵ տեղադրված հայտարարագրում նշվում է, որ Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում գրանցված է 13.10.2005 թվականին (գրանցման համարը՝ 264.120.07314):

Որպես իրական սեփականատեր N1 նշված է կազմակերպության տնօրեն, ՀՀ քաղաքացի Հայկ Ալոյանը՝ առանց բաժնեմասի նշման:

⁴ <http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/>

⁵ <https://www.e-register.am/am/companies/1316202/beneficiary.pdf>

Որպես իրական սեփականատեր N2 նշված է Կանադայի քաղաքացի Մայքլ Դեյվիդ Սենյոր Սպենսերը, ով աշխատում է ՕՍԻՍԿՈ Բ ԵՐՄՈՒԴՈ ԼԻՄԻԹԻՆԳ ընկերությունում (ք. Համիլթոն) և կազմակերպության նկատմամբ լիակատար վերահսկողություն իրականացնող՝ «Լիդիան Կանադա Վենչերս Քորփորեյշն» կազմակերպության ոչ գործադիր տնօրենն է:

Որպես իրական սեփականատեր N3 նշված է Մեծ Բրիտանիայի քաղաքացի Ջեֆֆրեյ Էդմունդ Քոուչը, ով աշխատում է Լոնդոնի ՕՐՄԱՅՆ ՌԻՍՈՐՍ ՓԱՐԹՆԵՐՍ և «1190728 Կանադա Ինքի» (ք. Տորոնտո) կազմակերպություններում և կազմակերպության նկատմամբ լիակատար վերահսկողություն իրականացնող՝ «Լիդիան Կանադա Վենչերս Քորփորեյշն» կազմակերպության տնօրենների խորհրդի անդամ և «1190728 Կանադա Ինքի» տնօրեն և բաժնետիրոջ ներկայացուցիչ:

Որպես իրական սեփականատեր N4 նշված է Մեծ Բրիտանիայի քաղաքացի Վիկտոր Ֆլոռենը, ով աշխատում է «1190728 Կանադա Ինքի» (ք. Տորոնտո) կազմակերպությունում և կազմակերպության նկատմամբ լիակատար վերահսկողություն իրականացնող՝ «Լիդիան Կանադա Վենչերս Քորփորեյշն» կազմակերպության տնօրենների խորհրդի անդամն է, «1190728 Կանադա Ինքի» տնօրենը և բաժնետիրոջ ներկայացուցիչը:

Իրական սեփականատերերի բաժնեմասերի, նրանց հետ փոխկապակցված անձանց, կամ կազմակերպությունների մասին տվյալները բացակայում են հայտարարագրում:

Սույն հաշվետվության ձևաչափի, ըստ որի հաշվետվությունը պետք է արտացոլի բոլոր շահագրգիռ կողմերի դիրքորոշումը, ներկայացվում է նաև Fidelity Consulting CJSC-ի կառավարիչ-գործընկեր Արմեն Մելքումյանի՝ ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ին ուղղված դիրքորոշումը «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի իրական սեփականատերերի վերաբերյալ, որն է. *«Իրական սեփականատերերի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված հայտարարագրին վերաբերող հատվածում ներկայացված են ձևակերպումներ, որոնք ընթերցողի մոտ կարող են առաջացնել ոչ միանշանակ պատկերացում Ընկերության կողմից իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրով ներկայացված տեղեկատվության ամբողջականության և ճշմարտացիության վերաբերյալ: Մասնավորապես՝ Հաշվետվության 8-րդ էջում ««Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի իրական սեփականատերերի մասին» բաժնում նշվել է, որ /մեջբերվում է բառացի/ «Որպես իրական սեփականատեր N1 նշված է կազմակերպության տնօրեն, ՀՀ քաղաքացի Հայկ Ալոյանը՝ առանց բաժնեմասի նշման» /մեջբերման ավարտը/, իսկ նշված վերնագիրը եզրափակվում է հետևյալ մտքով /մեջբերվում է բառացի/ «Իրական սեփականատերերի բաժնեմասերի, նրանց հետ փոխկապակցված անձանց, կամ կազմակերպությունների մասին տվյալները բացակայում են հայտարարագրում:» /մեջբերման ավարտը/: Այսինքն սովորական ընթերցողի մոտ միանշանակ պատկերացում է առաջանում, որ Ընկերությունը թույլ է տվել բացթողումներ, ոչ լրիվ և ոչ պատշաճ կերպով է լրացրել իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգը (հաստատված է՝ ՀՀ արդարադատության նախարարի 05.02.2020 թվականի «Իրական սեփականատերերի վերաբերյալ*

հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 36-Ն Հրամանով), կարելի է համոզվել, որ Ընկերության տնօրենը որպես իրական սեփականատեր նշվել է բացառապես այն պատճառով, որ Ընկերությունը չունի այլ 3 իրական սեփականատերեր, որոնք կրավարարեին օրենսդրությամբ նախատեսված պահանջներին և որոնց տվյալները ըստ այդմ ենթակա կլինեին հայտարարագրման: Նույնը վերաբերում է նաև Հաշվետվության մեջ որպես «բացակայող» նշված այլ տեղեկություններին, որոնք Ընկերության կողմից չեն ներկայացվել բացառապես դրանց բացակայության, այլ ոչ թե հայտարարագիրը սխալ, թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով լրացնելու պատճառով: Հետևաբար անհրաժեշտ ենք համարում Հաշվետվության համապատասխան մասում հղում կատարել վերոնշյալ կարգին՝ նշելով, որ Ընկերության կողմից իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիրը լրացվել և ներկայացվել է վերոնշյալ կարգի, ինչպես նաև ՀՀ այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ»:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի 26.09.2012թ. ՊՎ-245 (23.05.2016թ. փոփոխությամբ) ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած սոցիալական և բնապահպանական պարտավորությունների մասին

2.1 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններն են՝

1. Համայնքի ենթակառուցվածքների զարգացում՝ տարեկան 19,0 մլն. դրամ
2. Գյուղատնտեսության զարգացում՝ տարեկան 25,0 մլն. դրամ
3. Կրթություն՝ տարեկան 17,5 մլն. դրամ
4. Առողջապահություն՝ թիվ չկա նշված

Նշենք, որ այս գումարներն անմիջականորեն չեն փոխանցվելու համայնքային բյուջեներ, այլ այդ գումարներով Ընկերությունը կատարելու է ոլորտային զարգացման ծրագրեր:

2.1.1 Սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականը

Ըստ Ընկերության ԱՃԹՆ հաշվետվության⁶, 2016 թ. Գորայք բնակավայրին վճարել է 7,310,000 դրամ գումար և կատարել 338803786 դրամ արժեքային գնահատականով ոչ-ֆինանսական աջակցություն ազդակիր բնակավայրերին՝ համապատասխանաբար 53146973 դրամի՝ Գորայքին, 15096086 դրամի՝ Ջերմուկին, 13516700 դրամի՝ Սարավանին, 59137818 դրամի՝ Կեչուտին և 197906209 դրամի՝ Գնդեվազին: Մինչդեռ, ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) 2016 թվականի ԱՃԹՆ հաշվետվության⁷, այդ թվականին Ընկերության կողմից ոչ-ֆինանսական ներդրումների չափը կազմել է 15202228 դրամ՝ 1600մ երկարությամբ 150 դույմ տրամագծով մետաղական խողովակի տրամադրում Սարավան բնակավայրի խմելու ջրագծի վերանորոգման, բնակավայրում խաղահրապարակի, 2 հատ դեկորատիվ այգու հիմնման, ջերմոցների կառուցման համար: 2017թ. Ընկերության հաշվետվության համաձայն՝

⁶ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2016&company=16>

⁷ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=2>

Սարավան բնակավայրում (խոշորացված Զառիթափ համայնք) կատարել է ոչ-ֆինանսական ներդրումներ՝ ջերմոցների կառուցում, ավտոմեքենաների անվադողերի վերանորոգման, սպասարկման կետի կառուցում, խանութի շենքի վերանորոգում, կարի արտադրամասի կառուցում, կառատեի խմբակի մարզիչի աշխատավարձի վճարում, բնակիչների հետ դասընթացների անցկացում՝ կարի, անվադողերի վերանորոգման, մեղվաբուծության հմտությունների կատարելագործման վերաբերյալ:

2017թ. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությամբ⁸ ցույց է տրված, որ այդ տարի Ընկերությունը ազդակիր համայնքներում կատարել է 159902726 դրամի ոչ ֆինանսական ներդրում հետևյալ համամասնությամբ՝ 116670237 դրամի՝ Գնդեվազ, 10942392 դրամի՝ Գորայք, 5726867 դրամի՝ Կեչուտ, 13721974 դրամի՝ Ջերմուկ, 12841256 դրամի՝ Սարավան բնակավայրերի համար: Իսկ համաձայն ՏԿԵ նախարարության այդ տարվա հաշվետվության⁹ ոչ ֆինանսական ներդրումներ է կատարել միայն Սարավան բնակավայրում:

2018 թվականի Ընկերության հաշվետվության¹⁰ մեջ նշված է, որ այդ տարի ազդակիր համայնքներում կատարել է ընդհանուր 62291082 դրամի ոչ ֆինանսական արժեքային գնահատականով ներդրում՝ տարբեր սոցիալական ծրագրերի իրականացման համար: Նույն տարվա ՏԿԵՆ-ի հաշվետվությամբ այդ տարի Ընկերության կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարների կամ ոչ ֆինանսական ծրագրերի մասին չի նշվում¹¹:

2.3.1 Ընդերքօգտագործման 26.09.2012թ. ՊՎ-245 պայմանագրով Ընկերության ստանձնած բնապահպանական պարտավորություններն են՝

- Իրականացնել աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի համաձայն
- Պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, տեղափոխման, վերամշակման ընթացքում ՀՀ ընդունված ստանդարտների, նորմերի և կանոնների պահանջները

⁸[file:///C:/Users/user/Downloads/%C2%AB%D4%BC%D4%BB%D4%B4%D4%BB%D4%B1%D5%86%20%D4%B1%D5%90%D5%84%D4%B5%D5%86%D4%BB%D4%B1%C2%BB%20%D5%93%D4%B2%D4%B8%20%20-2017%20\(1\).pdf](file:///C:/Users/user/Downloads/%C2%AB%D4%BC%D4%BB%D4%B4%D4%BB%D4%B1%D5%86%20%D4%B1%D5%90%D5%84%D4%B5%D5%86%D4%BB%D4%B1%C2%BB%20%D5%93%D4%B2%D4%B8%20%20-2017%20(1).pdf)

⁹[file:///C:/Users/user/Downloads/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2017%20\(56\).pdf](file:///C:/Users/user/Downloads/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2017%20(56).pdf)

10

<file:///C:/Users/user/Downloads/%C2%AB%D4%BC%D4%BB%D4%B4%D4%BB%D4%B1%D5%86%20%D4%B1%D5%90%D5%84%D4%B5%D5%86%D4%BB%D4%B1%C2%BB%20%D5%93%D4%B2%D4%B8%20%20-2018.pdf>

11

[file:///C:/Users/user/Downloads/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2018%20\(29\).pdf](file:///C:/Users/user/Downloads/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2018%20(29).pdf)

- Ապահովել օգտակար հանաճոյի արդյունահանման նախագծի կատարումը
- Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից
- Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությամբ նախատեսված պայմանները
- Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից
- Ապահովել արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարների վճարումը
- Վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, բերել անվտանգ վիճակի
- Ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը

2.3.2 Ընկերության ստանձնած բնապահպանական պարտավորությունների կատարման մասին

- Չի ապահովվել մթնոլորտային օդի աղտոտման պահպանությունը, ինչը վկայում է հաճախակի աղտոտման փաստերի արձանագրումը մամուլում և սոցիալական հարթակներում, համաձայն որոնց, հողապայթեցման աշխատանքների հետևանքով առաջացել են փոշու ամպեր, որոնք փոշին հասցրել են անգամ Ջերմուկ քաղաք:
- Պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից չի պահպանվում, քանի որ անգամ Ծրագրի ազդեցության գոտում հայտնաբերված 479 հնագիտական հուշարձանների միայն 81 դամբարաններից ներկայումս պեղված են 46-ը, և անգամ չունեն օրենսդրությանը համապատասխան վկայագրեր: Դրանց պահպանության մասին դրույթներ արտացոլված չեն Ամուլսարի ծրագրում, այդ պատճառով դրանց պահպանությունը վտանգված է և անվերահսկելի:
- Ջրերի պահպանության և աղտոտման ոլորտում ստանձնած պարտավորությունները նույնպես չեն կատարվում, մասնավորապես, Գնդեվազ գյուղի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վթարները, ինչն առաջանում է Ծրագրի տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով:
- Արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված՝ բազային 254000000 դրամից 2016-2018թթ. ընթացքում վճարվել է 49830000 դրամը:
- Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ

հաշվետվությունները ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 191-Ն որոշման շրջանակներում բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով իրականացված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ Ընկերությունը վերջին անգամ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն հաղորդումներ է ներկայացրել 2018 թվականի համար, իսկ 2019 թվականին և 2020 թվականին չի ներկայացրել¹²:

Համաձայն սույն հաշվետվության ձևաչափի, ըստ որի հաշվետվությունը պետք է արտացոլի բոլոր շահագրգիռ կողմերի դիրքորոշումը, ներկայացվում է նաև Fidelity Consulting CJSC-ի կառավարիչ-գործընկեր Արմեն Մելքունյանի՝ ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ին ուղղված դիրքորոշումը հաշվետվության 2.3.2 կետի վերաբերյալ, որն է. «5. Հաշվետվության 2.3.2 կետում թվարկված են Ընկերության ստանձնած բնապահպանական պարտավորությունների կատարման մասին եզրահանգումներ, որոնցից առաջինով նշված է, որ Ընկերությունը /մեջբերվում է բառացի/ «Չի ապահովվել մթնոլորտային օդի աղտոտման պահպանությունը, ինչը վկայում է հաճախակի աղտոտման փաստերի արձանագրումը մամուլում և սոցիալական հարթակներում, համաձայն որոնց, հողապայթեցման աշխատանքների հետևանքով առաջացել են փոշու ամպեր, որոնք փոշին հասցրել են անգամ Ջերմուկ քաղաք:»: /մեջբերման ավարտը/: Այսինքն ստացվում է, որ Հաշվետվության մեջ մթնոլորտային օդի աղտոտման պահպանության վերաբերյալ եզրահանգումները հիմնված են բացառապես մամուլում, սոցիալական հարթակներում ներկայացված դիրքորոշումների վրա, չի ներկայացվել որևէ պաշտոնական փաստաթուղթ տվյալ պահանջի խախտումը պատշաճ կերպով, համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կողմից արձանագրված լինելու վերաբերյալ, տվյալ պարագայում համարում ենք, որ նման այսպես ասած «ենթադրյալ» խախտում չէր կարող ներառվել Հաշվետվության մեջ:

Նույն 2.3.2 կետի 2-րդ պարբերության մեջ նաև նշվում է հետևյալը՝ /մեջբերվում է բառացի/ «Պատամամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից չի պահպանվում, քանի որ անգամ Ծրագրի ազդեցության գոտում հայտնաբերված 479 հնագիտական հուշարձանների միայն 81 դամբարաններից ներկայումս պեղված են 46-ը, և անգամ չունեն օրենսդրությանը համապատասխան վկայագրեր: Դրանց պահպանության մասին դրույթներ արտացոլված չեն Ամուլսարի ծրագրում, այդ պատճառով դրանց պահպանությունը վտանգված է և անվերահսկելի» /մեջբերման ավարտը/: Հաշվետվության հեղինակի կողմից ներկայացված այս պնդումը փաստերի ակնհայտ խեղաթյուրում է: Ամուլսարի ծրագրի լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում իրականացված դաշտային ուսումնասիրությունների ընթացքում բացահայտվել է թվով 479 ՀԱՎԱՆԱԿԱՆ հնագիտական հուշարձան: Դրանցից միայն երեքն են գրանցված որպես հուշարձան: Այդ երեք հուշարձաններից երկուսը չեն

¹² <http://www.mnp.am/am/pages/233>

գտնվում Ծրագրի ենթակառուցվածքների անմիջական ազդեցության գոտում, որոնք տեղորոշվել և պահպանվել են: Մյուս հուշարձանը բավականին մոտ էր գտնվում ծրագրի ենթակառուցվածքներին, այդ իսկ պատճառով ընկերությունը դեռևս 2017թ-ին դիմել է ՀՀ Մշակույթի նախարարություն տվյալ հուշարձանի պահպանման գոտի ճշգրտելու համար: Պարզվել է, որ այդ հուշարձանը չունի սահմանված պահպանման գոտի: Ընկերությունը, կարևորելով մշակութային արժեքների պահպանումն ու անխաթարությունը, իր միջոցներով ուսումնասիրել է նշված հուշարձանի շրջակայքը և մասնագիտական կարծիքի հիման վրա սահմանել ու լիազոր մարմնին է առաջարկել նշված հուշարձանի պահպանման գոտին: Ինչի շնորհիվ ընկերության տարածքում առկա բոլոր գրանցված հուշարձանները մնացել են անխաթար: Մնացյալ նորահայտ մշակութային հուշարձանները, որոնք կարող էին ազդեցության ենթարկվել, պեղվել են (թվով 65) և արդյունքները տարեկան կտրվածքով ներկայացվել են ՀՀ Մշակույթի նախարարություն: «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջոցառումները կապված հնագիտական հուշարձանների ուսումնասիրության, պեղման և պահպանման հետ իրականացվել են բարձր մակարդակով՝ ՀՀ-ի ու միջազգային կոնվենցիաների պահանջներին համապատասխան: Ինչը նշված է նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ ՊՈԱԿ-ի գրության մեջ (գրությունը կցվում է):

Հետևաբար, կարծում ենք, որ 2.3.2 կետի այս պարբերությունը ամբողջությամբ պետք է հանվի հաշվետվությունից կամ վերանայվի՝ հիմք ընդունելով ընկերության հրապարակած պաշտոնական փաստաթղթերը:

Անդրադառնալով ջրերի պահպանության և աղտոտման ոլորտում ստանձնած պարտավորությունների չկատարման վերաբերյալ եզրահանգմանը, որը տեղ է գտել Հաշվետվության նույն 2.3.2 կետի 3-րդ պարբերության մեջ, կրկին հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել նման դիրքորոշման չհիմնավորվածությանը: Ակնհայտ է, որ համապատասխան խախտումը նույնպես պետք է արձանագրված լինի օրենքով սահմանված կարգով: Մինչդեռ որևէ պաշտոնական փաստաթղթի հղում չի կատարվում: Որպես Գնդեվազ գյուղի ջրամատակարարման համակարգի վթարների առաջացման պատճառ նշվում է Ամուլսարի ծրագրի շրջանակներում տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործումը: Այսինքն ստացվում է, որ Հաշվետվությամբ ներկայացված են որոշակի տվյալներ Ընկերության գործունեության ընթացքում և դրա արդյունքում բնապահպանական նորմեր խախտելու վերաբերյալ, սակայն հստակ նշված չէ, թե արդյոք օրենքով սահմանված կարգով արձանագրվել են նման խախտումներ, հատկապես որ ժամանակահատվածում, որ տեխնիկայի օգտագործման, որ գործողությունների կատարման ընթացքում է արձանագրվել խախտումը, արդյոք առկա է Հաշվետվության մեջ նշված հետևանքների (փոշու արտանետում, ջրերի աղտոտում, ջրագծերի վթարի առաջացում և այլն) և Ընկերության գործողությունների միջև պատճառահետևանքային որևէ կապ: Վերոնշյալ հիմնավորումների բացակայությունը Ընկերության կողմից որակվում է որպես զրպարտություն՝ Ընկերության գործարար համբավի արատավորում:

Հաշվետվության 2.3.2 կետի 4-րդ պարբերությամբ որպես խախտում նշվում է հետևյալը՝ /մեջբերվում է բառացի/ «Արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված՝ բազային 254000000 դրամից 2016-2018թթ. ընթացքում վճարվել է 49830000 դրամը:» /մեջբերման ավարտը/: Ընկերության համար

տարակուսանք է առաջացնում նշված հանգամանքը բնապահպանական նորմերի խախտումների շարքում ներառելը: Ակնհայտ է, որ Արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված բազային 25400000 ՀՀ դրամը վճարելու պարտականությունը նախատեսված է Ընկերության կողմից իրականացվող Ծրագրի գործողության ողջ ժամանակահատվածի համար, և Ընկերությունը Ծրագրի իրականացման շրջանակներում գործունեություն իրականացնելով 2016-2018 թվականների ընթացքում, համապատասխանաբար վճարումները կատարել է այդ տարիների համար: Հարկ ենք համարում հիշեցնել, որ 2018 թվականի հունիսի 22-ից հայտնի պատճառներով, Ընկերությունը զրկված է եղել հանքի տարածք մուտք գործելու և այնտեղ որևէ գործողություն իրականացնելու հնարավորությունից, բայց նույնիսկ այս պարագայում Ընկերությունը շարունակել է իրականացնել մշտադիտարկումների համար նախատեսված վճարումների կատարման պարտավորությունը: Ի գիտություն հաշվետվության հեղինակների 2014թ-ից առ այսօր մշտադիտարկումների համար Ընկերությունը վճարել է 121150000 ՀՀ դրամ:

Նույնը վերաբերում է նաև Հաշվատվության 2. 3. 2 կետի 4-րդ պարբերությամբ, որպես բնապահպանական նորմերի խախտում ներկայացված Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 191-Ն որոշման շրջանակներում բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով իրականացված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ Ընկերության կողմից վերջին անգամ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն 2018 թվականի համար համապատասխան հաղորդումներ ներկայացված լինելու, իսկ 2019 և 2020 թվականների համար ներկայացված չլինելու հիշատակումը: Տվյալ դեպքում հարց է առաջանում, թե ինչպես պետք է Ընկերությունը իրականացնեք մշտադիտարկումներ, եթե 2018 թվականի հունիսի 22-ից ի վեր զրկված է եղել հանքի տարածք մուտք գործելու հնարավորությունից, և ինչպես կարող է նման հանգամանքներում Ընկերության կողմից 2019 և 2020 թվականների համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն վերոնշյալ որոշմամբ սահմանված կարգով հաղորդումներ չներկայացնելը որակվել որպես Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված բնապահպանական նորմերի խախտում»:

3. Հանքի փակման աշխատանքներն՝ ըստ ընդերքօգտագործման պայմանագրի (23.05.2016թ. փոփոխությամբ)

1. Վերաորակավորման դասընթացների կազմակերպում և համայնքների սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ տարեկան 61,0 մլն. դրամ
2. Հանքատար և լցակույտատար ճանապարհների ռեկուլտիվացիա՝ 18,26կմ-176.837մլն. դրամ
3. Արտաքին լցակույտի ռեկուլտիվացիա՝ 140.69հա- 681.249 մլն.դրամ
4. Տարրավացման հարթակի և ավազանների ռեկուլտիվացիա՝ 135.75հա-657.329 մլն. դրամ

5. ԱԴՎ կայան և վարչական շենքերի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա՝ 19.35հա-93.697 մլն. դրամ
6. Փոխարկիչների հանգույցի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա՝ 16.87հա-81.688 մլն.դրամ
7. Ավտոինքնաթափերի բեռնաթափման հանգույցի ռեկուլտիվացիա՝ 5.11հա-24.744 մլն. դրամ
8. Ջարդիչ կայանների ապամոնտաժում և ռեկուլտիվացիա՝ 18.93հա- 91.663 մլն. դրամ
9. Պայթուցիկ նյութերի պահեստների ապամոնտաժում և ռեկուլտիվացիա՝ 1հա - 2.518
10. Ջրահեռացման առուների ռեկուլտիվացիա՝ 4,7 կմ-45,517 մլն. դրամ
11. Ջրամատակարարման կայանների ապամոնտաժում և ռեկուլտիվացիա՝ 0.52հա - 2.518-մլն. դրամ
12. Արդյունաբերական հրապարակի ռեկուլտիվացիա՝ 1հա-4.842 մլն. դրամ
13. Ռեկուլտիվացման աշխատանքների մոնիթորինգ և պահպանում՝ 150.0 մլն. դրամ
14. Մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգ՝ 82.0մլն. դրամ
15. Կանաչապատման/ռեվեգետացման մոնիթորինգ՝ 22.0մլն. դրամ:

4. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշներն՝ ըստ ԱՃԹՆ հաշվետվությունների¹³

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	0	0	
Շահութահարկ, դրամ	Հշվրկ. 390831555 Վճր. 390831555 Հշվնց. 0	Հշվրկ 1120148857 Վճր. 1120148857 Հշվնց. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0
Ոչ ռեզիդենտի շահութահարկ			Հշվրկ.՝ 999633217 Վճր.՝ 999633217
Եկամտային հարկ, դրամ	Հշվրկ. 394447580 Վճր. 394447580 Հշվնց. 0	Հշվրկ. 1065456238 Վճր. 1065456238 Հշվնց. 0	Հշվրկ. 2043193249 Վճր. 2043193249
Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հշվրկ. 337882549 Վճր. 0 Հշվնց. 0	Հշվրկ. 8282581390 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0

¹³ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/>

		Հշվնց. 0	
Ներմուծման ավելացված արժեքի հարկ			Հշվրկ.՝ 1028902000 Վճր.՝ 750848503
Ակցիզային հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Ռոյալթի, դրամ	Հշվրկ 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Բնօգտագործման վճար, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 126637 Վճր. 126637	Հշվրկ. 80329 Վճր. 80329
Բնապահպանակա ն վճարներ՝ ըստ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 82970 Վճր. 82970	Հշվրկ. 83325 Վճր. 83325
Բնապահպանակա ն վճարներ ԵԱՏՄ անդամ երկրներից (մաքսային), դրամ	Հշվրկ. 0 Վճր.	Հշվրկ. 79554 Վճր. 79554	Հշվրկ. 0 Վճր. 0
Բնապահպանակա ն վճարներ ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից (մաքսային), դրամ	Հշվրկ. 51884 Վճր. 51884	Հշվրկ. 9401406 Վճր. 9401406	Հշվրկ. 0 Վճր. 0
ՇԹ պեո.տուրք, դրամ	Հշվրկ. 10000000 Վճարված՝ 0	Հշվրկ.10010000 Վճարված՝ 0	Հշվրկ.՝ 10000000 Վճր.՝ 10000000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ Բազային՝ 1864926000	Տարվա համար հաշվարկված և վճարված՝ 121938000	Տարվա համար հաշվարկված և վճարված՝ 121938000	Տարվա համար հաշվարկված և վճարված՝ 121938000
Մշտադիտարկումն երի իրականացման վճար, դրամ	Տարվա համար հաշվարկված և վճարված՝	Տարվա համար հաշվարկված և վճարված՝	Տարվա համար հաշվարկված և վճարված՝ 16610000

Բազային՝ 254000000	16610000	16610000	
Գույքահարկ դրամ	Երևան՝ Հշվրկ 752447 Վճր. 752447	Երևան՝ Հշվրկ. 1472943 Վճր. 1472943	Երևան Հշվրկ. 1645733 Վճր. 1645733
Հողի հարկ դրամ	Գնդեվազ՝ Հշվրկ. 3431243 Վճր. 3431243 Գորայք՝ 25398	Գնդեվազ՝ 9240560 Գորայք՝ 25398	Գնդեվազ՝ 9250510 Գորայք՝ 25398
Հողի ձեռք բերում	Գնդեվազ՝ 145398784		
Վարձակալություն (Հողամաս), դրամ	Գորայք՝ 128454780՝ Սարավան՝ 128781508 Գնդեվազ 102704130	Գորայք՝ 128454780 Սարավան՝ 128781508 Գնդեվազ՝ 153888781	Գորայք՝ 121845478 Սարավան՝ 128988181 Ջերմուկ՝ 176158155
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Տույժեր		Հշվրկ. 2797546 վճարումների ուշացման համար Վճր. 2797546	
Տուգանքներ			
Մոգ.-տնտ. պարտավորություն	Ֆինանսական՝ 7,310,000 դրամ՝ Գորայք, Ոչ ֆինանսական (արժեքային գնահատական) 53146973 դրամի՝ Գորայք, 15096086 դրամի՝ Ջերմուկ, 13516700 դրամի՝ Սարավան, 59137818 դրամի՝ Կեչուտ 197906209	Ոչ ֆինանսական (արժեքային գնահատական) 116670237 դրամի՝ Գնդեվազ 10942392 դրամի՝ Գորայք, 5726867 դրամի՝ Կեչուտ, 13721974 դրամի՝ Ջերմուկ, 12841256 դրամի՝ Սարավան	Ոչ ֆինանսական (արժեքային գնահատական) 1. 7997000 դրամի՝ Ջերմուկ, Գնդեվազ, Սարավան, Գորայք բնակավայրերում կազմակերպվել են դասընթացներ համայնքային խնդիրների բացահայտման, գնահատման և առաջնայնության, համայնքի դերի, ֆինանսների հայթայթման վերաբերյալ: 2. 4700000 դրամի՝ Եղեգնաձոր համայնքի շախմատի երկու սենյակների և միջանցքի հիմնովին վերանորոգման համար 3. 886000 դրամի՝ Ջերմուկ, Գնդեվազ,

	<p>դրամի՝ Գնդեվազ</p>	<p>Սարավան և Գորայք բնակավայրերի երիտասարդության մասնագիտական կրթության, համայնքներից լեռնամետալուրգիա սովորող ուսանողների տարեկան ուսման վարձի տրամադրում:</p> <p>4. 630000 դրամի աջակցություն Ջերմուկի մանկական երգչախմբին:</p> <p>5. 1267465 դրամի՝ Գնդեվազին և 1267465 դրամի Սարավանին՝ Լիդիանի կողմից հիմնված կարատեի դպրոցում մարզվելու համար:</p> <p>6. 5653847 դրամի՝ Գնդեվազ և Ջերմուկ քաղաքի երիտասարդների համար դասընթացներ սուրիզմի կազմակերպման վերաբերյալ:</p> <p>7. 1600000 դրամ Գորայքին՝ անգլերեն լեզվի խթանման և կազմակերպման նպատակով համայնքին տրամադրվել է 5 համակարգիչ:</p> <p>8. 1050000 դրամի՝ Գորայքին՝ Լիդիանի կողմից հիմնված պարի համույթին:</p> <p>9. 284000 դրամի՝ Գորայքին տրամադրվել են պարագաներ և նյութեր՝ անասունների արհեստական սերմնավորման ծառայություններ իրագործելու համար:</p> <p>10. 15546305 դրամի՝ Գնդեվազին, անասնագում կառուցելու համար:</p> <p>11. 2849762 դրամի՝ Ջերմուկ, Գնդեվազ, Սարավան և Գորայքի բնակիչներին, հողի ձեռքբերման շրջանակներում բիզնեսների և մարկետինգի հմտությունների դասընթացների կազմակերպման համար:</p> <p>12. 7200000 դրամի՝ Սարավան և Գորայք բնակավայրերում Լիդիանի կողմից հիմնված ատամնաբուժարանների համար՝ բնակչությանը ատամնաբուժական անվարձահատույց ծառայություններ մատուցելու նպատակով:</p>
--	-----------------------	---

			<p>13. 2400000 դրամի՝ Ջերմուկ, Գնդեվազ, Սարավան, Գորայք, բնակավայրերի բնակիչներին անհատական բժշկական օգնություն և գումարի տրամադրում</p> <p>14. 11809000 դրամի՝ Գնդեվազին՝ 1 հատարածքի վրա օրգանական կոմերցիոն արտադրություն հիմնելու՝ մի քանի տեսակ նոր և ավանդական մշակարույսերի մշակման համար:</p>
<p>Համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ</p>	<p>Ոչ ֆինանսական՝ (արժեքային գնահատական) 7000000-Լոր 7000000-Շենաթաղ 6300000-Վայք</p>	<p>Ոչ ֆինանսական՝ (արժեքային գնահատական) 6989500-Արտավան 29823230-Վայք</p>	<p>Ոչ ֆինանսական՝ (արժեքային գնահատական) 22008083 - Վայք</p>
<p>Ընդերքօգտագործողի կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները</p>	<p>1. «Առողջ համայնքներ» հիմնադրամ՝ 4000000 դրամ</p> <p>2. Բրիտանական դեսպանատուն Հայաստանում՝ 1100000 դրամ</p> <p>3. «Զանգակատուն» ԲՀ՝ 3674802 դրամ</p> <p>4. Հայաստանի զարգացման հիմնադրամ՝ 11858500 դրամ</p> <p>5. Հայաստանի շախմատի ակադեմիա՝</p>	<p>1. «Աջակցություն համայնքներին» ՀԿ՝ 3999114</p> <p>2. «Առողջ համայնքներ» հիմնադրամ՝ 16941990</p> <p>3. Բոնցքամարտի դպրոց՝ 250000</p> <p>4. Բրիտանական դեսպանատուն Հայաստան՝ 600000</p> <p>5. Եթե մենք բոլորս ԲՀԿ՝ 100000</p> <p>6. «Զարգացման</p>	<p>1. «Առողջ համայնքներ» հիմնադրամ՝ 15000000</p> <p>2. «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ՝ 4512100</p> <p>3. «Զանգակատուն» ԲՀ՝ 231000</p> <p>4. «Զարգացման սկզբունքներ» ՀԿ՝ 573462</p> <p>5. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն՝ 130500</p> <p>6. Հայաստանի շախմատի ակադեմիա՝ 1500000</p> <p>7. ՀՀ շախմատի ֆեդերացիա՝ 3500000</p> <p>8. «Հյուսան դիզնիթի ընդ փիս» ԲՀ՝ 11526397</p>

	<p>1500000 դրամ</p> <p>6. ՀԲԸՄ՝ 2000000 դրամ</p> <p>7. Հայաստանի շախմատի ֆեդերացիա՝ 3000000 դրամ</p>	<p>սկզբունքներ» ՀԿ՝ 1352691</p> <p>7. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն՝ 3975000</p> <p>8. Հայաստանի շախմատի ակադեմիա՝ 1500000</p> <p>9. ՀՀ ԱԻՆ «Ադեմաների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ՝ 16730810</p> <p>10. ՀՀ շախմատի ֆեդերացիա՝ 3500000</p> <p>11. ք. Գորիս – Եկեղեցի՝ 500000</p>	
<p>Աշխատատեղեր</p>	<p>118 մարդ, որից 81 տղամարդ, 37 կին (1-ը՝ օտարերկրյա քաղաքացի)</p>	<p>222 մարդ, որից 152 տղամարդ, 70 կին (5-ը՝ օտարերկրյա քաղաքացի)</p>	<p>237 մարդ, որից 183 տղամարդ, 54 կին (18-ը՝ օտարերկրյա քաղաքացի)</p> <p>Ըստ Fidelity Consulting CJSC-ի կառավարիչ-գործընկեր Արմեն Մելքունյանի՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ին ուղարկված նամակի. «Ընկերության կողմից հանքի շինարարության փուլում ներգրավված է եղել ավելի քան 15 կապալառու ընկերություն, որոնց Ամուլսարի ծրագրում ներգրավված աշխատակիցների թիվը՝ Ընկերության աշխատակիցների թվի հետ միասին 2018 թվականի ապրիլ ամսվա դրությամբ կամել է 1460 հոգի, որոնց</p>

			<i>ավելի քան 31 տոկոսը հանդիսացել են ազդակիր համայնքների բնակիչներ»:</i>
Անհատույց օտարումներ	49422802 (104 ֆիզիկական անձանց, ֆինանսական)	4723258 (18 ֆիզիկական անձանց, ֆինանսական)	0

5. Ընկերության և պետական մարմինների ԱՃԹՆ հաշվետվությունների տարբերությունների մասին

Տարբերություններ կան ՏԿԵՆ-ի և Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունների միջև:

Ըստ ՏԿԵՆ-ի ԱՃԹՆ 2016 թվականի հաշվետվության¹⁴ Երևանին որպես գույքահարկ վճարել է 496915 դրամ (116451 դրամ գերավճար): Ըստ Ընկերության՝ հաշվարկվել և վճարվել է 752447 դրամ:

Ըստ ՏԿԵՆ-ի՝ Գնդեվազ համայնքին՝ վճարել է 500000 դրամ հողի հարկ (գերավճար կամ ապառք 2931243 դրամ): Ըստ Ընկերության հաշվարկվել և վճարել է 3431243 դրամ

Ըստ ՏԿԵՆ-ի 2016 թվականին Ընկերության կողմից սոցիալ-տնտեսական ներդրումների շրջանակներում կատարել է 15202228 դրամի ոչ ֆինանսական ներդրում: Ըստ Ընկերության՝ 338203786 դրամի ներդրում:

Ըստ ՏԿԵՆ-ն 2017թվականի հաշվետվության՝¹⁵ Ընկերությունը Երևանին որպես գույքահարկ վճարել է 1275000 դրամ գույքահարկ (42477 դրամը գերավճար է): Ըստ Ընկերության՝ հաշվարկվել և վճարվել է 1472943 դրամ:

Ըստ ՏԿԵՆ-ի՝ ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններից կատարել է որոշակի վճարումներ՝ Սարավան բնակավայրում ջերմոցների կառուցում, ավտոմեքենաների անվադողերի վերանորոգման սպասարկման կետի կառուցում, խանութի շենքի վերանորոգում, կարի արտադրամասի կառուցում, կարատեի խմբակի մարզիչի աշխատավարձի վճարում, բնակիչների հետ դասընթացների անցկացում՝ կարի, անվադողերի վերանորոգման, մեղվաբուծության հմտությունների կատարելագործման վերաբերյալ, սակայն դրանք կրել են ոչ ֆինանսական բնույթ և հաշվետվությունում տրված չեն այդ աշխատանքների արժեքային գնահատականները: Մինչդեռ այդ մասին Ընկերության հաշվետվությունում¹⁶ նշվում է, որ 2017թ. Ընկերությունն այդ տարի ազդակիր համայնքներում կատարել է 159902726 դրամի ոչ ֆինանսական ներդրումներ:

¹⁴ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=2>

¹⁵ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=2>

¹⁶ [file:///C:/Users/user/Downloads/%C2%AB%D4%BC%D4%BB%D4%B4%D4%BB%D4%B1%D5%86%20%D4%B1%D5%90%D5%84%D4%B5%D5%86%D4%BB%D4%B1%C2%BB%20%D5%93%D4%B2%D4%B8%20%20-2017%20\(1\).pdf](file:///C:/Users/user/Downloads/%C2%AB%D4%BC%D4%BB%D4%B4%D4%BB%D4%B1%D5%86%20%D4%B1%D5%90%D5%84%D4%B5%D5%86%D4%BB%D4%B1%C2%BB%20%D5%93%D4%B2%D4%B8%20%20-2017%20(1).pdf)

ՏԿԵՆ-ի 2018թ. ԱՃԹՆ-ի հաշվետվության¹⁷ մեջ նշված է, որ Երևան քաղաքում Ընկերությունը վճարել է 1612998 դրամ գույքահարկ: Ընկերության այդ թվականի հաշվետվության մեջ նշված է 1645733 դրամ: ՏԿԵՆ-ի հաշվետվության մեջ նշված է, որ Գորայք համայնքին Ընկերությունը վճարել է 12700 հողի հարկ (12700 գերավճար կամ ապառք), Ընկերության հաշվետվության մեջ՝ 25398 դրամ: ՏԿԵՆ-ի հաշվետվության «Ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարներ» տողում ոչինչ նշված չէ, մինչդեռ Ընկերության հաշվետվության մեջ նշված է, որ այդ տարի ազդակիր բնակավայրերին և համայնքներին ցուցաբերել է 62291082 դրամի ոչ ֆինանսական արժեքով օժանդակություն:

Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) և Ընկերության 2016-2018թթ. ԱՃԹՆ հաշվետվությունների շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման և մշտադիտարկումների դիմաց վճարումների մասով տարբերություններ չկան:

Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) և Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունների մեջ կան էական անհապատասխանություններ:

ՊԵԿ-ի 2016 թ. ԱՃԹՆ հաշվետվության¹⁸ համաձայն՝ Ընկերությունը մուծել է 348615000 դրամ եկամտահարկ: Ըստ Ընկերության՝ մուծել է 394447580 դրամ: Ըստ ՊԵԿ-ի՝ մուծել է 70805276 դրամ ավելացված արժեքի հարկ, ըստ Ընկերության, հաշվարկել, բայց չի վճարել 337882549 դրամ ավելացված արժեքի հարկը: ՊԵԿ-ի հաշվետվության համաձայն՝ Ընկերությունը վճարել է 223953 դրամ ակցիզային հարկ, ըստ Ընկերության, ոչինչ չի վճարել: Ըստ ՊԵԿ-ի՝ վճարել է 134131 դրամ բնապահպանական և բնօգտագործման վճարներ, ըստ Ընկերության, չի վճարել:

Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական 10,0 մլն. դրամ տուրքն, ըստ ՊԵԿ-ի, մուծել է, ըստ Ընկերության՝ չի մուծել:

ՊԵԿ-ի 2017 թ. ԱՃԹՆ հաշվետվության¹⁹ համաձայն՝ Ընկերությունն այդ թվականին վճարել է 1025000000 դրամ եկամտահարկ, ըստ Ընկերության հաշվետվության, 1065456238 դրամ: Ըստ ՊԵԿ-ի՝ այդ տարի վճարել է 1728660567 դրամ ավելացված արժեքի հարկ, ըստ Ընկերության՝ հաշվարկվել, սակայն չի վճարվել 8282581390 դրամ ավելացված արժեքի հարկը: Ըստ ՊԵԿ-ի 2017թ. վճարվել է 313130 դրամ ակցիզային հարկ, ըստ Ընկերության, չի հաշվարկվել և չի վճարել: Ըստ ՊԵԿ-ի՝ վճարել է բնօգտագործման և բնապահպանական հարկ՝ 316250 դրամ և 79554 դրամ՝ ԵՏՄ անդամ երկրներից և 83248 դրամ՝ ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար: Ըստ Ընկերության՝ վճարել է 209607 դրամ բնապահպանական և բնօգտագործման հարկեր և մաքսային սահմանով անցկացված ապրանքների համար՝ 9480960 դրամ բնապահպանական հարկ:

ՊԵԿ-ի 2018 թ. ԱՃԹՆ հաշվետվության²⁰ համաձայն՝ Ընկերությունն այդ թվականին վճարել է ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ 981656631 դրամ, ըստ Ընկերության, շահութահարկ չի վճարել: Ըստ ՊԵԿ-ի՝ այդ թվականին վճարել է 2130757965 դրամ եկամտահարկ, ըստ

¹⁷ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=2>

¹⁸ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=3>

¹⁹ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

²⁰ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>

Ընկերության հաշվետվության, 2043193249 դրամ: Ըստ ՊԵԿ-ի՝ հաշվետու տարում միասնական հաշվին վերադարձվել է 6211766873 դրամ ավելացված արժեքի հարկ, ըստ Ընկերության, հաշվարկել և վճարել է 0 դրամ ավելացված արժեքի հարկ, իսկ ներմուծման ավելացված արժեքի հարկ հաշվարկել է 1028902000 դրամ, վճարել՝ 750848503 դրամ: Ըստ ՊԵԿ-ի՝ 2018 թ. հաշվետվության՝ Ընկերությունն այդ տարի վճարել է բնօգտագործման և բնապահպանական հարկ՝ 213372 դրամ և բնապահպանական 1037497 դրամ հարկ ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար: Ըստ Ընկերության՝ վճարել է 83325 դրամ բնապահպանական և բնօգտագործման հարկեր, իսկ մաքսային սահմանով անցկացված ապրանքների համար վճարումների մասով տվյալները բացակայում են իր հաշվետվությունում: ՊԵԿ-ի հաշվետվության մեջ ցույց է տրված, որ Ընկերությունն այդ տարի չի վճարել ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն. դրամ պետական տուրքը, մինչդեռ Ընկերությունը ցույց է տվել, որ այդ տուրքը մուծել է:

Ընկերության և պետական մարմինների 2016-2018թթ. ԱՃԹՆ հաշվետվությունների համեմատական վերլուծությունը ցույց է, տալիս, որ բացի ՇՄՆ պետական մարմնից, մնացած հաշվետվություններում բերված տվյալները խիստ տարբերվում են միմիանցից, ինչը ցույց է տալիս որ, միանշանակ, այդ տվյալները հավաստի չեն, և դրանք չեն կարող օգտագործվել գործունեության գնահատման համար:

6. Ազդակիր համայնքների զարգացման ծրագրերում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի ներգրավվածության մասին

Ջերմուկ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրում, որպես համայնքին սպառնացող վտանգ, նշված են Ամուլսարում կատարվող հանքարդյունաբերության հնարավոր պատճառած վնասները, համայնքում գործազրկության մակարդակի աճը, երիտասարդության արտագաղթը: Որպես համայնքի զարգացման միտումներ դիտարկված են բնական ռեսուրսների՝ հիմնականում հումքային, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունների ռացիոնալ օգտագործումը: Համայնքի զարգացման տեսլականն է համայնքը դարձնել առողջարանային և գյուղական տուրիզմի զարգացման կենտրոն, զարգացնել այգեգործությունը, գյուղական մթերքի տեղում արտադրելու, վերամշակելու և սպառման շուկա ստեղծելու գաղափարը: Համայնքում ստեղծել էկոտուրիզմի և ագրոտուրիզմի ենթակառուցվածքներ: Ծրագրում առանձին բաժնով անդրադարձ է կատարված շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված՝ ընդհանուր բնույթի նախատեսվող միջոցառումներին: Ներկայացված 40 ծրագրից ոչ մեկում չկա «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի օժանդակության մասին ակնկալիք:

Զառիթափ համայնքի զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի օժանդակության բաղադրիչը ներառված չէ:

Գորայք համայնքի զարգացման ծրագրում նախատեսված կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է համագործակցել ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների հետ, որ համայնքային բյուջեում կնախատեսվեն համայնքային ներդրումները: Գորայք համայնքի զարգացման հնգամյա ծրագրում որպես համայնքի թույլ կողմ նշված է Ամուլսարի հանքավայրի բաց

շահագործման հանգամանքը: Համայնքի զարգացման ծրագրերն իրականացնելու նպատակով առաջին հերթին նախատեսում են ապավինել սեփական միջոցներին, ծրագրերի բավարար գովազդման միջոցով մոտիվացնել ներդրողներին և շահառուներին, համայնքը կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսում է համագործակցել ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների, բարերարների, միջազգային դոնոր կազմակերպությունների հետ: Նախատեսվում է իրականացնել 13 միջոցառում՝ «պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն» ձևաչափով, սակայն որևէ ծրագրով «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ից անմիջական օժանդակության ակնկալիք չի նշվում:

7. Բնակիչների, հասարակական կազմակերպությունների, բնապահպան ակտիվիստների կողմից արձանագրված՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի գործունեության հետևանքով բնապահպանական օրենսդրության պահանջների խախտումների և սոցիալական խնդիրների վերլուծություն

- 2018թ. նոյեմբերին Ջերմուկ քաղաքի մոտ 3000 բնակիչ ստորագրել է «Ջերմուկ համայնքն էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ» կոլեկտիվ հանրագիր, որի հիմքով Ջերմուկի ավագանին 2018թ-ի դեկտեմբերի 18-ին որոշել է զարգացնել Ջերմուկ համայնքը որպես էկոլոգիապես մաքուր տնտեսություն՝ բացառելով իր տարածքում մետաղական հանքարդյունաբերությունը:²¹
- «Ելնելով նրանից, որ ոսկի պարունակող հանքաքարի արդյունահանման ժամանակ, կախված տեխնոլոգիական լուծումներից, հնարավոր է հանքաքարից անջատվող ռադիոակտիվ իզոտոպների կուտակում շրջակա տարածքներում, անհրաժեշտ է հանքավայրի շրջակա տարածքում կազմակերպել շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգ և մոնիթորինգի արդյունքները պարբերաբար ներկայացնել ՀՀ ԿԱ ՄԱԿ ՊԿ» (մեջբերում ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կոմիտեի նախագահի՝ «Գեոթիմ» ՓԲԸ-ի տնօրենին ուղղված 17.02.2012 թվականի N-11-Մ-7 նամակից):
- «Հիդրոերկրաբան. եթե Ջերմուկի հանքային ջրերը շարքից հանեն, Ջերմուկը կվերանա» հոդվածում ներկայացվել են «Ինժեներ-երկրաբան» ընկերության նախագահ Ռուբեն Յադոյանի կողմից հնչեցրած Ամուլսարի հանքավայրի շահագործման վերաբերյալ անհանգստությունները²²:
- 2019թ. հոկտեմբերի 8-ին Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունում տեղի ունեցավ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման համար Դարբ գետից 40.0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծի քննարկումը: Քննարկման ժամանակ բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները դեմ արտահայտվեցին նախագծին՝

²¹ <http://jermuk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=cc4fe3b5-9c3e-4cb2-bbd5-918aa9bc45c2>

²² <http://www.ecolur.org/en/news/amulsar/geologist-if-jermukmineral-water-spoil-jermuk-to-disappear/6269/>

հաշվի առնելով այդ քանակի ջրի նվազման բացասական հետևանքները շրջակա միջավայրի վրա²³: Նախարարությունը հայտը մերժել է:

- Շրջակա միջավայրի նախարարի 2021թ. մարտի 22-ի N86-Ա հրամանով Արփա գետից 41,3 լ/վրկ ջրաքանակով ջրառ իրականացնելու համար Ընկերության 2021թ. հունվարի 27-ի գրությամբ ներկայացված ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը նույնպես մերժվել է:
- Պ.Ալոյանի և Հ.Ալոյանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուրանի և թորիումի հանքայնացում առկա է նաև Ամուլսարի երկրորդային քվարցիտներում, որտեղ դրանք ոսկու և արծաթի հետ առաջացնում են ոսկի - արծաթ – ուրան – թորիումային ասոցիացիա և պատկանում են հանքավայրերի էպիթերմալ ջրաջերմային (հիդրոթերմալային) ծագումաբանական տիպին, ինչպիսին համարվում է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը:²⁴
- Պ.Ալոյանն ու Հ.Ալոյանը երկրորդային քվարցիտներում ուրանի և թորիումի միներալներ հայտնաբերել են Ամուլսարի երկրորդային քվարցիտների տարածման շրջանում 2006 - 2008 թ. «Գեոթիմ» ՍՊԸ ընկերության կողմից (հետագայում «Լիդիան արմենիա» ՓԲԸ) երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հանքաքարի նմուշների միներալաբանական հետազոտությունների շնորհիվ, որոնց մասին «Գեոթիմ» ընկերության երկրաբանական հաշվետվություններում և «Լիդիան Արմենիա» ընկերության ՇՄԱԳ-ում որևէ խոսք չկա: Այնինչ Ընկերությունը պարտավոր էր անդրադառնալ նախկինում կատարված բոլոր հետազոտություններին. կատարել վերլուծություն և ապա ներկայացնել իր հետազոտությունների արդյունքները:²⁵
- ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթում քննվում է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ թաքցնելու առերևույթ դեպքի առթիվ քրեական գործը, որի շրջանակներում նշանակվել է էկոլոգիական, երկրաբանական, հիդրոլոգիական, երկրաֆիզիկական, քիմիական, շինարարատեխնիկական համալիր փորձաքննություն: Այդ փորձաքննության կատարումը հանձնարարվել էր «Earth link & Advanced Resources Development» (ELARD) լիբանանյան ընկերությանը: ELARD-ի փորձաքննության արդյունքում Ամուլսարի ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ մի շարք ռիսկեր է նշել իր եզրակացության մեջ: Այդ եզրակացության հրապարակումից հետո առաջ քաշվեց Ամուլսարի ծրագրին տրված բնապահպանական փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրած ճանաչելու հարցը, որն առկախվեց: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ 2019թ. օգոստոսի 29-ին անցկացված տեսակոնֆերանսի ժամանակ «ELARD»

²³ <https://www.ecolor.org/hy/news/mining/--/11642>

²⁴ УДК 533.04:553.495 © Ресурсный потенциал радиоактивного сырья армении и перспективы его освоения

²⁵ Հնդված՝ «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտներում ուրանի և թորիումի հանքազոյացման հարցի շուրջ.

Շահեն Խաչատրյան» <http://www.armecofront.net/amulsar/uranium-thorium/>

լիբանանյան խորհրդատվական ընկերության փորձագետներն ասացին. «2016 թ-ի ՇՄԱԳ-ը և նախագիծը բավարար չեն հանքավայրն ապահով շահագործելու համար, ծրագրի համար պետք է իրականացվի նոր գնահատում, ՇՄԱԳ-ը պետք է թարմացնել, պետք է պատշաճ կերպով նախագծվեն մեղմման միջոցառումները: Գնահատումները՝ լինի սոցիալական, թե բնապահպանական, անհերքելիորեն թերի են, վստահելի չեն»:²⁶ 2019 թվականի սեպտեմբերի 5-ին Շրջակա միջավայրի նախարարն 05.09.2019թ. թիվ 1//02-1/1230 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին ներկայացրեց պետական լիազոր մարմինների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ELARD և TRC կազմակերպությունների դիրքորոշումը Ամուլսարի ծրագրի փաստաթղթերի վերաբերյալ²⁷: Այդ փաստաթղթում 13 կետով ներկայացվեցին Ամուլսարի ծրագրում առկա բացթողումներն ու թերությունները և առաջարկ՝ դրանցում հավաստիանալու համար ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին տալ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում ստուգումների իրականացման հանձնարարական: Սակայն այդ հանձնարարականը նույնպես չի կատարվել:

- Հատվածներ WWF-Հայաստանի (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ) պաշտոնական հայտարարությունից. «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտային հանքավայրը գտնվում է կենսաբազմազանության առումով կարևոր վայրերից մեկում՝ ներառյալ «Կարևորագույն թռչնաբանական տարածքը» (IBA), «Էմերալդ տարածքը» (Emerald Site) և «Կարևորագույն կենսաբազմազանության տարածքը» (KBA): Այն ապրելավայր է ավելի քան 25 տեսակ կենդանիների և առնվազն երկու տեսակ բույսերի համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Հանքի շահագործումն այլ սպառնալիքների հետ միասին ոչնչացնելու է վտանգված տեսակների ապրելավայրը, ինչպես նաև ֆիզիկապես վնասելու է դրանց մեծ մասը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» (ՇՄԱԳ) փաստաթղթով առաջարկված տեսակների պահպանմանն ուղղված միջոցառումները բավարար չեն, իսկ կենսաբազմազանության վերաբնակեցման ծրագրում առաջարկված միջոցառումները թերի են և վերանայման կարիք ունեն: Այս փաստերը ներկայացված են նաև «ELARD»-ի վերջին հետազոտություններում»: «ՇՄԱԳ-ի դրական եզրակացությունը հակասում է ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես, «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածին, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 18-րդ հոդվածներին, «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածներին, քանի որ Ամուլսարի տարածքում հայտնաբերվել են վերոնշյալ թվարկված բազմաթիվ կենդանատեսակներն ու բուսատեսակները՝ գրանցված Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում»: «WWF-ի փորձագետների կողմից 2018 թվականին Ամուլսարում հայտնաբերված Ապոլլոն թիթեռը և ոզնաթուփ մեխակը կարող են համարվել որպես նոր էկոլոգիական գործոն, ինչն էլ պահանջում է

²⁶ <https://www.primeminister.am/hy/videos/item/e4nhBD72UCs/>

²⁷ http://www.mnp.am/uploads/1/1568272090About_shmag_LyidianArmenia.pdf

հավելյալ ուսումնասիրություն և ներկա ՇՄԱԳ-ի չեղարկում, քանի որ վերջինս չի անդրադառնում այդ տեսակներին»:²⁸

- «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստանը», ներկայացնելով մի շարք փաստեր, դիմել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը, կոչ անելով չեղյալ ճանաչել Ամուլսարի ծրագրին նախկինում տրված փորձաքննական եզրակացությունը:²⁹ Այսպիսով՝ ըստ հասարակության և բազմաթիվ անկախ փորձագետների, «Լիդիան Արմենիա» ընկերության Ամուլսարի ծրագրում ռիսկերը թերի են գնահատված, իսկ եզրակացությունը տրվել է գործող օրենսդրության և միջազգային կոնվենցիաների դրույթների բազմաթիվ խախտումներով:
- 2018 թ-ին Ջերմուկ առողջարանի բնակիչները փակեցին հանք տանող ճանապարհների մուտքերը և տեղադրեցին պահակակետեր՝ պահանջելով ՀՀ կառավարությունից արգելել հանքի շահագործումը: Ջերմուկում հավաքվեց 3000 ստորագրություն ընդդեմ մետաղական հանքարդյունահանման: Ավելի քան երկու տարվա ընթացքում Ընկերությունը փորձում էր հեռացնել Ամուլսարի պահապանների պահակակետերը, բայց դա չհաջողվեց: 2020թ-ի աշնանը սկսվեց հայ-ադրբեջանական պատերազմը, Ամուլսարի պահապաններից շատերը մեկնեցին ռազմաճակատ՝ պաշտպանելու սահմանները՝ թողնելով պահակակետերը: Մի քանիսը, ցավոք, մահացան: Այնուամենայնիվ, այս ծայրահեղ բարդ իրավիճակում Ջերմուկի ակտիվիստները մտադիր են շարունակել պայքարը:

8. ԷկոԼուրի՝ 07.04.2021-09.04.2021թթ. Ամուլսարի ծրագրի տարածք կատարած այցելության և ուսումնասիրության մասին

Ամուլսարի ծրագրի տարածք այցելության ընթացքում հանդիպումներ կայացան Ջերմուկ համայնքի ավագանու անդամ Մխիթար Բունիաթյանի, Գնդեվազ գյուղի ակտիվ բնակիչների, Գորայք համայնքի ներկա ղեկավար Աշոտ Աղաջանյանի և համայնքի նախկին ղեկավար Առուստամ Առուստամյանի հետ: Հանդիպման ժամանակ քննարկված հարցերը հիմնականում վերաբերում էին ներկա՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում ՀՀ առջև ծագած տնտեսական մարտահրավերին, Ամուլսարի Ծրագրի վերաբերյալ հարցվածների դիրքորոշմանը:



²⁸ <https://www.ecolur.org/hy/news/mining/wwf--/11553/>

²⁹ <https://www.ecolur.org/hy/news/mining/----/11474/>



Նկար 6., 7., 8. Հարցազրույցներ Ջերմուկում, Գորայքում, Գնդեվազում

Պարզվեց հետևյալը՝

1. Տեղական ակտիվիստների և բնապահպանների կողմից Ծրագրի տարածք մուտքն արգելող 22-ամյա շրջափակումը դադարեցված է: Ընկերության պահնորդական խմբերն անցակետերում հսկում էին Ծրագրի տարածքի գործունեության մուտքերը:

2. Ջերմուկ համայնքի ավագանու անդամ Մխիթար Բունիաթյանը նշեց, որ Ծրագրի բացասական բնապահպանական և առողջապահական ազդեցությունների վերաբերյալ համայնքի բնակչության գիտակցության մակարդակը բարձրացել է, բնակիչների մեծ մասը դեմ է Ծրագրի իրականացմանը: Նոր իրավիճակին առնչվող զարգացումները կապված կլինեն ավագանու որոշումներից: Անձամբ ինքը դեմ է, և կարծում է, որ Ծրագրի գործունեությունից պետական բյուջե մուտքագրվելու են չնչին գումարներ, սակայն այդ գումարները համարժեք չեն տված հավանական վնասների չափերին: Ընկերության ակտիվ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում հյուրանոցների մեծ մասն իրենց տարածքները վարձով էին տրվել Ընկերության աշխատակիցներին, և դրանք իրենց բուն՝ առողջարանային նպատատակին չէին ծառայում: Քաղաքում չեն լուծել աշխատատեղերի հարցը, նույնիսկ տեղի մասնագետների՝ աշխատանք ստանալու առաջարկները մերժվել են:

Ջերմուկի ակտիվիստների և բնապահպանական ակտիվիստների կողմից հանքավայր տանող ճանապարհների ապաշրջափակումից հետո հանքի տարածքում տարվող աշխատանքների մասին տեղեկություն չունի: Պատերազմի և կորոնավիրուսի համավարակի հետևանքով մարդկանց շրջանում առաջացած սոցիալական ծանր վիճակն, Ընկերությունն, ամենայն հավանականությամբ, կշահարկի: Շատ լավ կլինի, որ Ամուլսարի ծրագրի քննարկումներին ներգրավվեն նաև առողջապահական բիզնեսի ներկայացուցիչները, քանի որ հանքի շահագործման հարևանությամբ առողջարանային բիզնեսն օրինաչափորեն կտուժի:

2018թ-ի դեկտեմբերի 18-ին ընդունված՝ «Ջերմուկ համայնքը որպես էկոլոգիապես մաքուր տնտեսություն զարգացման և իրենց տարածքում մետաղական հանքարդյունաբերության արգելման մասին» Ջերմուկ համայնքի ավագանու որոշումը մնում է ուժի մեջ, և այն

չեղարկելու վերաբերյալ օրակարգ չի ձևավորվել, իսկ ակտիվիստներն անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով կրկին կոչմեն բողոքի ակցիաների:

3. Գորայք համայնքի ղեկավար Աշոտ Աղաջանյանը նշեց, որ ունեն վերապահումներ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի՝ Գորայք համայնքում գործունեության նկատմամբ: Մասնավորապես, նրանց կողմից չեն պահպանվել հանքավայրի շահագործման աշխատանքներում Գորայքի բնակիչներին աշխատանքներում ներգրավելու մասին՝ նախկինում տրված պայմանավորվածությունները, և ի հակառակ դրան, թեկուզ ոչ մասնագիտական կարողություններ պահանջող աշխատատեղերը լրացվել են ոչ ազդակիր բնակավայրերի բնակիչներով: Վերջին տարիներին աշխատանքից ազատվել են անգամ «Լիդիանի» կրթական ծրագրերի շրջանակներում համայնքից ուսում ստացած մասնագետները: Ընկերությունը դրսի կապալառու կազմակերպություն է ընտրել իր տարածքի աղբահանության համար՝ չօգտագործելով տեղի նման ծառայությունների ներուժը: Նա նշեց նաև, որ 1200 հա համայնքային հողերի վարձակալության գումարը՝ 12,8 մլն դրամ, իրար համարժեք չեն (1 հա-ի համար տարեկան 10,5 հզ. դրամ), և տրամաբանական կլինի, եթե վերանայվեն վարձակալության դրույքաչափերը: Բոլոր դեպքերում համայնքապետը նշեց, որ պետք է ունենալ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների բացառման հստակ և հիմնավորված երաշխիքներ և դրանց առկայության պարագայում միայն կայացնել Ամուլսարի Ծրագրի թույլտվության որոշումը:

4. Գորայք համայնքի նախկին ղեկավար Առուստամ Առուստամյանը միանշանակորեն կողմ արտահայտվեց հանքավայրի շահագործմանը, քանի որ, ըստ նրա, ծրագրով նախատեսված տեխնոլոգիաներն առաջադեմ և եզակի են: «Ամերիկայում կիրառվում են նույն տեխնոլոգիաները, ինչի ենք կասկածում, որ Հայաստանում չեն պահպանվի այդ նորմերը», - ասաց նա: Ըստ նրա՝ հանքավայրից աղտոտումներ չկան: Ջրցան մեքենաների աշխատելու դեպքում փոշու արտանետումները կբացառվեն: Սակայն նա նաև համոզված է, որ եթե արտանետումներ տեղի ունենան, ապա, անշուշտ, կչորանան ծառերը և մշակովի բույսերը, արոտավայրերի աղտոտվածության հետևանքով կնվազի տնային կենդանիների գլխաքանակը, դժվարություններ կստեղծվեն տեղական մթերքների իրացման գործում, սակայն դրանք այս Ծրագրի իրագործման արդյունքում բացառվում են, քանի որ Ծրագիրը աղտոտումներ չի առաջացնի: Ըստ նրա՝ շրջակա միջավայրի վնասման կանխարգելման լավագույն միջոցն աշխատանքների կազմակերպման մշակույթի բարձրացնելն է: Ամուլսարում նախկինում Գորայքից աշխատում էին 80-90 հոգի: Մի հոգու աշխատելու դեպքում հնարավոր էր ընտանիքի հոգսերը հոգալ: Հանքի շահագործմամբ գյուղացու աշխատանքը կթեթևանար: Ստացված աշխատավարձերը կներդրվեն գյուղատնտեսական ծրագրերում՝ ապահովելով իրենց հետագա կեցությունը: Նա նաև նշեց, որ գյուղի դեմոգրաֆիան փոխվել է, խորհրդային տարիներին գոյություն ունեցող 154 տնտեսությունից մնացել է մոտ կեսը: Բայց դա Ամուլսարի ծրագրի հետ կապ չունի: Առանց մտածելու և համապատասխան բիզնես վարելու հմտությունների բնակիչները վեցրել են մեծ տոկոսադրույթներով վարկեր, չեն կարողացել մարել, ստիպված գյուղից արտագաղթել են:

Գյուղում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, որը տնտեսապես ձեռնաստու չէ: Որպեսզի տնտեսությունը զարգանա, շահույթ ապահովի, անհրաժեշտ են ներդրումների մեծ ծավալներ և բիզնես կառավարելու բավարար գիտելիքներ ու հմտություններ: Ժամանակին մեծ բերքատվություն ապահովող ցորենի տեղական սորտերը

վերացել են, իսկ նոր տեսակները չեն ադապտացվում մեր կլիմային, դրա պատճառով էլ գյուղատնտեսությունն անկում է ապրում:

5. Գնդեվազ գյուղի բնակիչ Միհրդատ Ներսիսյանը նշեց, որ իրենք ապաշրջափակել են հանք տանող ճանապարհները հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքով: Ընկերությունն էլ, օգտվելով առիթից, փշալարերով պատեց տարածքը, տեղադրեց պահնորդական կետեր: Ընկերությունը, Ամուլսարի ծրագրին համապատասխան, պահեստավորելու է մոտ 1000 տ նատրիումի ցիանիդ, 1000տ աղաթթու, 120000 տոննա պայթուցիկ նյութ, և թշնամին առաջին իսկ առիթի դեպքում կիրթիռակոծի այդ պահեստը՝ տարածքը դարձնելով աղետի գոտի: Կավերվի պահեստից 1,5 կմ հեռավորության վրա գտնվող Գնդեվազ բնակավայրը, կաղտոտվեն Արփա և Դարբ գետերը: Առայժմ Ընկերությունը չի աշխատում, բայց եթե նորից սկսի, իրենք էլի ոտքի կկանգնեն: Վայոց ձորի մարզից ընդհանուր 15000, այդ թվում Ջերմուկից 3000 հոգու ստորագրությամբ հանրագիր է ուղարկվել կառավարություն: Այստեղ հարցը ոչ միայն բնապահպանական է, ուղղակի մարզի գոյության հարցն է: Պայթեցման աշխատանքների ժամանակատվածում գյուղից ծիրանի արտահանման քանակությունները նվազել են 80%-ով: Գյուղի բնակչության 10-15%-ն օգտվեց հողի վաճառքից, 10-15%-ը ստացավ աշխատավարձ: Սակայն մի քանի տարով սոցիալական վիճակի լավացումը հարատև չէ: Մարզն առանց հանքարդյունաբերության էլ կարող է զարգանալ՝ գերապատվությունը տալով գյուղատնտեսությանը, անասնապահությանը, մեղվաբուծությանը, տուրիզմին: Ծրագրի իրագործման արդյունքում արդեն իսկ 3 անգամ վնասել են Գնդեվազի խմելու ջրագիծը; Ցիանական հարթակի շինարարության ընթացքում կատարված պայթեցումներից նույնպես արտանետվում է փոշին, նստում այգիների, մշակաբույսերի, բերքի վրա: Ինչ վերաբերում է Ընկերության կրած ներդրումների կորստին, ապա դա անհամատեղելի է Ջերմուկ առողջարանային քաղաքի ենթակառուցվածքների համար կատարված ծախսերի հետ:

9. Եզրակացություն

- Ընկերության և պետական մարմինների ԱՃԹՆ հաշվետվությունների միջև կան էական տարբերություններ, և հնարավոր չէ միանշանակ գնահատական տալ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի աշխատանքների թափանցիկությանը և կատարված աշխատանքների ցուցանիշներին:
- Հասարակության և բազմաթիվ անկախ փորձագետների համաձայն՝ «Լիդիան Արմենիա» ընկերության Ամուլսարի ծրագրի ռիսկերը թերի են գնահատված, իսկ բնապահպանական փորձաքննական եզրակացությունը տրվել է գործող օրենսդրության և միջազգային կոնվենցիաների դրույթների բազմաթիվ խախտումներով, և անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա Ծրագրի ազդեցության նոր գնահատում:
- ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթում քննվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ թաքցնելու առերևույթ դեպքի առթիվ քրեական գործը 2021թ. ապրիլի վերջի դրությամբ դեռևս չի ավարտվել: Հասարակական բողոքի բազմաթիվ ակցիաների, հանքավայր տանող ճանապարհների

շրջափակման արդյունքում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն չի ավարտել շինարարական աշխատանքների փուլը և, համաձայն իր ընդերքօգտագործման ՊՎ-245 պայմանագրի 8-րդ բաժնի, պայմանագրային պարտականությունների՝ շինարարական աշխատանքների փուլի ժամկետների խախտման համար պատասխանատվություն չի կրում:

- ՀՀ ՏԿԵՆ-ի՝ ի դեմս նախարար Սուրեն Պապիկյանի և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջև 2020թ-ի դեկտեմբերի 30-ին կնքված «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ ՊՎ-245 պայմանագրի փոփոխություն» համաձայնագրով կատարվել են հետևյալ փոփոխությունները.
«Ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրի՝ «2. Պայմանագրի առարկան» բաժնի
1. 2.1 կետի առաջին պարբերության «2009թ-ի դեկտեմբերի 28-ից մինչև 2034 ապրիլի 3» բառերը փոխարինել «մինչև 2036 թվականի հունվարի 1-ը» բառերով
2. 2.1. կետի առաջին պարբերության՝ «շինարարական շրջան՝ մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը, 9 տարի օգտակար հանածոյի արդյունահանում, 5,5 տարի՝ հանքի փակում» բառերը փոխարինել «շինարարական շրջան՝ մինչև 2021թ-ի հունիսի 1-ը, օգտակար հանածոյի արդյունահանում 9 տարի, 5,5 տարի՝ հանքի փակում» բառերով»:³⁰
- Ընկերությունը հետևողականորեն հերքում է իր գործունեության դեմ հնչող մեղադրանքները, տարբեր դատական աստիճաններում ներկայացնում է հայցեր, անհիմն է համարում և հայտարարում Շրջակա միջավայրի նախարարի ինչպես նախորդ՝ Արփա և Դարբ գետերից, այնպես էլ նոր՝ Արփա գետից 41,3 լ/վ տեխնիկական ջրօգտագործման թույլտվության հայտի մերժման 2021թ. մարտի 22-ի N86-Ա հրամանի բողոքարկման վերաբերյալ իր մտադրությունների մասին³¹: Արդեն իսկ կայացված դատական վճիռներ կան պատգամավոր Սերգեյ Բազրատյանի, իրավաբան Նազելի Վարդանյանի, lin.am լրատվական կայքի դեմ ներկայացված «զրպարտության» հայցերով³²:

³⁰ http://www.mtad.am/u_files/file/1/NOR%20Lydian_Paymanagir%20245.PDF

³¹ <https://www.lydianarmenia.am/arm/newsdetails/shrjaka/303/>

³²

<https://www.lydianarmenia.am/arm/newsdetails/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%A2%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A7-%D4%BC%D5%AB%D5%A4%D5%AB%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B4%D5%AB-%D5%B7%D5%A1%D6%80%D6%84-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%81%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A6%D6%80%D5%BA%D5%A1%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A5%D6%80%D6%84%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BB%D5%B8%D5%BE/304/>

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: